ԼՌԻ՛Ր, ՀԱՅ ԵՐԳԻՉ...

Լռի՛ր, հայ երգիչ, մեր սեւ՝ օրերում
Ինչ՞ ես վարդ երգում յիմար քնարով
Նայի՛ր սեւ սուգ է ծանրացած իշխում
Մ՝եր աւեր երկրում... իսկ դու անվրդով...

Դու վարդ ես երգում այն աւեր երկրում
Որի վարդերը մտան սուգի տակ.
Քո դարդն ես երգում, վարդդ ես գովում
Մինչդեռ մեր կեանքը արիւն բովանդակ...

Դու վարդն ես երգո՞ւմ հայոց դաշտերի
Բայց է՞ր չես երգում դու նոցա վշտեր
Դու է՞ր չես երգում մ՝եր դառն կեանքի
Արիւնը, ներկած նրանց ծով-աչքեր...

Ա՜հ, լռի՛ր, երգիչ... գնա՛, հեռացիր
Էլ մի՛ գրիր դու հայոց տառերով.
Մ՝եր կեանքը ցա՛ւ է մե՛ծ ծով վշտալիր
Լուղորդ ենք ուզում վառուած մեր դարդով...

Լուղորդ ենք ուզում՝ քոցոտ երգերով,
Որ ջերմ տատանի մեր վշտի ծովակ,
Որ նա խիստ ուժգին այրող կայծակով
Ցրէ՝ ամպերը, տանէ մեզ ծովափ...

Երգողն ենք ուզում նահատակ ազգի
Դառն ցաւերը, որ այրէ՝ երկինք...
Երգող ճիչերը շարշարուող հայի
Շարժող քարերը, հարուածող սաստիկ...

Ցաւոտ օրերում՝ ի՞նչ են հարկաւոր
Քո „եար ու դարդը". լռի՛ր, դաւաճա՛ն...
Թո՛ղ քո խղճալի փոքրոգի օրօր.
Երգ ենք պահանջում ցաւի դեղ-դարմա՛ն...

Ե. ԽԱՆԼԱՐԵԱՆ